ԵՍ

ՄԻ ԶԱՐԿԵՆ ԵՍ ՔՈ ԿՈՎԻ

Հայրենիքը սոսկ աշխարհագրական տարածք չէ, որի վրա բնակվում ես

Այն գեներով փոխանցված արյան կանչ է, որ մահն անգամ չի կարող լռեցնել...

Արեգնազ Պողոսյանի հետ հանդիպման առիթը նրա ամուսնու Հյուսիսային Արցախի Գետաշենի ենթաշրջանի պաշտպանության կազմակերպիչ, ՆԳ մայոր, զոհված ազատամարտիկ Սարմեն Պողոսյանի 50-րդ ծննդյան օրն էր ու ծննդյան օրից ոչ այնքան հեռու... մահվան 10-րդ տարելիցը, որ այսօր 2000թ. սեպտեմբերի 15-ին միաժամանակ նշվում է Հայ ազատամարտիկների փառքի թանգարանում:

Սարմեն Պողոսյան ... Պարզապես մեկը նրանցից, որոնց մասին կարճ ասում են «որդին է նախ հայրենիքի», ծնված 1950թ. սեպտեմբերի 13-ին Դաշտային Ղարաբաղի Մարտունաշեն գյուղում, ողբերգաբար զոհված 1990թ. սեպտեմբերի 16-ին, Շահումյանի շրջանի երքեջ գյուղից դեպի Գետաշեն անցումի ժամանակ:

Մինչեւ այսօր էլ պարզ չեն Սարմեն Պողոսյանի մահվան իրական հանգամանքները: Սակայն պարզ է մի բան, որ խորհրդային միլիցիայի մայոր Ս. Պողոսյանը մանավանդ այդ խառնաշփոթ օրերին չէր կարող չհայտնվել երկակի վիճակում. իբրեւ խորհրդային միլիցիայի ծառայող այդ օրերին նա նույնիսկ «Ղարաբաղ» կոմիտե էր «ծերբակալել», մինչդեռ իբրեւ հայ ազատամարտիկ պայքարում էր, որ ծգծգվի... նրանց ծերբակալությունը: Հայ ազատամարտիկը «պայքարում էր» խորհրդային միլիցիայի ծառայողի դեմ, ու երբ վերջապես հաղթեց վերջինիս, հասկացավ, որ իր կյանքի գերագույն նպատակն է հայրենի հողի Մարտունաշենի ու Գետաշենի ինքնապաշտպանության կազմակերպումը, թույլ չտալ, որ գյուղերն ամայանան. «Գյուղերը թե դուրս գան, իմ դիակի վրայով կլինի...»:

Ամուսնու մահից հետո Արեգնազը երեւի ցնորվեր, եթե չծնվեր իրենց վերստին միացնող-ապրեցնող լուսանկարների ալբոմ ձեւավորելու միտքը: Կինը ոչ միայն ձեւավորում էր, այլեւ մտովի զրուցում էր Սարմենի հետ: Զրուցում էր Դոնի Ռոստովի ժամադրության, իրենց առաջին աշնան, աղջկա ծննդյան օրվա մասին:

Ալբոմի նախավերջին էջում վերջին ծննդյան օրվա լուսանկարներն են: Սարմենը այդ օրը դարձել էր 39 տարեկան: 40-րդ աշունը չհասցրեց... Սեպտեմբերի 13-ից արդեն պատրաստվում էր մի անսովոր-հեռավոր ճամփորդության, պատրաստվում էր մեկնել: Ոչ ծննդյան օրվա առթիվ հավաքված հյուրերի հորդորները, ոչ հիվանդ հոր ու մոր աղերսանքները, ոչ կնոջ կիսահավատացող-կիսավախեցած հայացքը չկարողացան հետ պահել: Մեկնեց:

«Նախորդ երեկոյան շատ էր շտապում գյուղ հասնել,- գրում են ընկերները հրաժեշտի խոսքում,- դրա համար էլ ծորերին չէր նայում: Թեպետ քաջ գիտեր, որ ծորեր կան...»: Զոհվեց շրջափակված հայրենի գյուղի ճանապարհին, Գետահովտի ժայռերի տակ, ծորերից մեկում:

... Ալբոմի ամենավերջին էջում իրենց բաժանող աշնան «դիմանկարն էր» մռայլ ուրվապատկերով: Ուրվապատկերից աջ ու ձախ Սարմենն ու Արեգնազն էին, որ չէին տեսնում միմյանց: Ուրվապատկերի շարունակությունը հերոսի մահը պատկերող լուսանկարներն էին:

1990թ. սեպտեմբերի 20-ին Սարմեն Պողոսյանի թաղումն էր, նաեւ Սեդա անունով դստեր ծննդյան օրը... Այդ ծննդյան օրը դրանից ի վեր ուրիշ կերպ, ուրիշ մի տխրությամբ պիտի ամեն անգամ նշեն Սարմենի կինն ու դուստրերը Սեդան ու Գայանեն, բայց պիտի հիշեն նաեւ ազնիվ ու խոնարհ մի հպարտությամբ, որ նշանակում է հայրենիք հասկացությունը սոսկ աշխարհագրական տարածք չէ, որի վրա բնակվում ենք, այլ գեներով փոխանցվող արյան կանչ, որը մահն անգամ չի կարող լռեցնել...

ՆԱՐԻՆԵ ՍԵՐՈԲՅԱՆ